



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 144 Ը 45 . 29 . 08 201 70

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՄԻՋԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ (ՄՈԳ) ՇԵՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի սովորողներին ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4.3-րդ կետի պահանջներով

հ ր ա մ ա յ ու մ ե մ .

1. Երևանի պետական համալսարանում 2017-2018 ուսումնական տարվա համար միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը սահմանել. բակալավրիատում՝ 11.00-ն, մագիստրատուրայում՝ 15.00-ն:
2. Սահմանել, որ 2017-2018 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ԵՊՀ սովորողներին ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու համար հիմք է ընդունվելու ԵՊՀ ռեկտորի 2017թ. փետրվարի 9-ին 24Տ9 հրամանով սահմանված՝ բակալավրիատում՝ 10.00, մագիստրատուրայում՝ 14.00 միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը:
3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ սովորողներին և աշխատողներին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ